ՀՀԿ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

28 փետրվար, 2023 թվականի № 19 -Լ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԽՈՐՀՐԴԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 52-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 4-րդ և 5-րդ մասերով, 26-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 27-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, 33-րդ և 34-րդ հոդվածներով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 84-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետով և հաշվի առնելով Հանրային հեռարձակողի խորհրդի գործունեությունը կանոնակարգելու անհրաժեշտությունը՝ Հանրային հեռարձակողի խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. Հանրային հեռարձակողի խորհրդի 2022 թվականի սեպտեմբերի 29-ի N 52-Լ որոշման № 1 հավելվածով հաստատված՝ Հանրային հեռարձակողի խորհրդի գործունեության կանոնակարգում կատարել հետևյալ փոփոխությունը.

   1) 9-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.
   «9. Հանրային հեռարձակողի գործադիր տնօրենը պարտավոր է Խորհրդի անդամի հարցման կամ պահանջի հիման վրա նրան տրամադրել Հանրային հեռարձակողի գործունեությանը վերաբերող ցանկացած տեղեկություն և փաստաթուղթ: Սույն կետով սահմանված հարցումը կամ պահանջը Խորհրդի անդամը Հանրային հեռարձակողի գործադիր տնօրենին ներկայացնում է գրավոր կարգով կամ կորպորատիվ էլեկտրոնային փոստի միջոցով՝ այդ հարցումը կամ պահանջը բովանդակող գրության պատճենը էլեկտրոնային եղանակով միաժամանակ ուղարկելով Խորհրդի նախագահին: Նշված տեղեկությունը և/կամ փաստաթուղթը Հանրային հեռարձակողի գործադիր տնօրենի կողմից տրամադրվում է Խորհրդի անդամին հարցման կամ պահանջի ստացման պահից 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում, եթե այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից կամ պահանջվող տեղեկության կամ փաստաթղթի տրամադրման համար նախապես որոշակի աշխատանք կատարելու անհրաժեշտությունից: Պահանջվող տեղեկության կամ փաստաթղթի տրամադրման համար նախապես որոշակի աշխատանք կատարելու անհրաժեշտության դեպքում այդ մասին Խորհրդի անդամը պետք է պատշաճ տեղեկացվի Հանրային հեռարձակողի գործադիր տնօրենի կողմից: Խորհրդի անդամի կողմից պահանջվող տեղեկությունների և/կամ փաստաթղթի տրամադրման անհնարինության դեպքում Հանրային հեռարձակողի գործադիր տնօրենը պարտավոր է հարցման կամ պահանջի ստացման պահից 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում Խորհրդի անդամին տրամադրել գրավոր պատճառաբանված մերժում:»

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Ա. ՇԻՐԻՆՅԱՆ
28 փետրվար, 2023 թվականի
ք. Երևան